ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽՀԱՋՈՐԴՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Խաչատրյան Հասմիկ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար
ըմբռնումն ու հմուտ կիրառումը այն ամենի, ինչ գիտես:
Ա. Դիստերվեգ

Հանգուցային բառեր՝ *բառապաշար, լեզվամտածողություն, տրամաբանության և մտածողության զարգացում, միջառարկայական կապ, աշխարհայացք, արժեհամակարգ*

Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդման հիմնական խնդիրն է դաստիարակել ու կրթել այնպիսի սերունդ, որը կարողանա լիարժեք հաղորդակցվել շրջապատի հետ իր լեզվագործածական լիարժեք ունակությունների շնորհիվ: Մայրենի լեզուն, միաժամանակ լինելով ուսումնասիրության առարկա և միջոց այլ առարկաների ուսուցման համար, կրթության մեջ ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն:

Խոսքի զարգացման աշխատանքներին հիմնավորապես սկսում ենք անդրադառնալ տարրական դասարաններում, երբ աշխատանքներ են կատարվում աշակերտների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության զարգացման, աշխարհայացքի և այլ բարոյակամային որակների ձևավորման ուղղությամբ՝ ստեղծելով որոշակի կրթական մակարդակ՝ միջին դպրոցում խոսքի զարգացման աշխատանքները շարունակելու համար: Ընդ որում՝ տարրական դասարաններում խոսքի զարգացման աշխատանքներին անդրադառնում ենք բոլոր առարկաների դասաժամերին. սովորեցնում ենք ճիշտ կազմել բանավոր և գրավոր խոսք ոչ միայն մայրենի, այլ նաև օտար լեզուներով, կատարում համեմատություններ օտար լեզվի շրջանակներում՝ նշելով տարբերություններն ու ընդհանրությունները, սովորեցնում ենք արտահայտել սեփական ապրումները, մտքերն ու զգացմունքները, գաղափար ենք տալիս շրջապատող իրականության մասին, աշակերտները սովորում են իրենց մտքերն արտահայտել և ներկայացնել տրամաբանական հաջորդականությամբ և ձեռք են բերում դատողական մտածողություն: *Երաժշտություն, Կերպարվեստ և Տեխնոլոգիա* առարկաների ուսուցման ժամանակ ապահովում ենք աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, սովորեցնում ընկալել գեղեցիկը, դրականը, զարգացնում ստեղծագործական երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, երաժշտական լսողությունը, ինչը ևս օգնում է խոսել ձայնային ճիշտ ելևէջումներով, ունենալ արտահայտիչ արտասանություն և առոգանություն:

Տարրական դպրոցում խոսքի զարգացման մի շարք եղանակներ ներկայացրել ենք մեր նախորդ հոդվածում[4, 298-306], այժմ կանդրադառնանք տարրականի հենքի վրա միջին դպրոցում շարունակվող աշխատանքներին, որոնք հետագայում կապահովեն կրթամակարդակ ավագ դպրոցում աշակերտների խոսքի զարգացման, մտավոր ու հոգևոր ունակությունների ձևավորման համար:

Միջին դպրոցում ևս խոսքի զարգացման աշխատանքներում կարևոր է միջառարկայական կապերի ապահովումը, քանի որ այդ տարբերակով է հնարավոր առավել լիարժեք իրականացնել աշակերտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, ձևավորել հասարակության լիարժեք անդամ՝ հարուստ բազմազան ու բազմակողմանի գիտելիքներով, որոնց լիարժեք յուրացման, վերլուծության ենթարկելու և սեփականը դարձնելու շնորհիվ աշակերտները կունենան սուր ու ճկուն միտք, կապահովվի մտավոր զարգացման միասնություն: Քանի որ կյանքը միասնական է և անմիջականորեն պետք է կապվի բոլոր առարկաների ուսուցման հետ, ուստի բոլոր առարկաները պետք է դիտվեն մեկ ամբողջության բաղադրիչներ:

5-րդ դասարանում ուսուցման ձևը փոխվում է. տարրականից անցնելով միջին դպրոց՝ աշակերտն սկսում է ուսումնասիրել նոր առարկաներ, որոնք պահանջում են աշակերտի մտահորիզոնի ընդլայնում և մտածողության զարգացում: Ուսուցման այս փուլում աշակերտների մեջ պետք է ձևավորել սեր և հետաքրքրություն ուսուցանվող առարկայի նկատմամբ: Միջին դպրոցում շարունակվում են աշակերտների վերացական մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքները, միայն թե կարևոր է, որ ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպվի և միտված լինի աշակերտների ճանաչողական ունակությունների զարգացմանը: Կարևոր է նաև, որ բոլոր առարկաների ուսուցիչները հստակ պատկերացնեն այն դժվարությունները, որոնց հետ աշակերտներն առնչվում են ուսուցման ընթացքում, և առաջարկեն դրանց հաղթահարման առավել արդյունավետ ուղիներ: Փորձը ցույց է տալիս, որ 5-րդ դասարանում լավ սովորողների առաջադիմությունն ընկնում է, ուսուցիչներն սկսում են բողոքել աշակերտների աղքատիկ բառապաշարից, խոսքային դժվարություններից, սակայն այս դեպքում պետք է հաշվի առնել, որ այդ բոլոր թերություններն ու դժվարությունները կապված են աշակերտների տարիքային առանձնահատկությունների և հոգեկան տագնապների հետ, և դա է պատճառը, որ տարրականից միջին դպրոց անցումը զգալիորեն ազդում է աշակերտների առաջադիմության վրա: Այս պարագայում ուսուցանվող բոլոր առարկաների ուսուցիչները, դպրոցի ընդհանուր պահանջներին համապատասխան, պետք է դասերը դարձնեն հետաքրքիր ու գրավիչ՝ օգտագործելով խթանման արհեստական մեթոդներ: «Ուր երեխաների օգուտն է, այնտեղ պետք է լինի նաև հաճույքը» [3, 197]:

Սովորողների հաղորդակցական կարողությունները հիմնականում զարգացնում ենք դասագրքերում ընդգրկված բնագրերի, տեքստային աշխատանքների և գործնական վարժությունների հիման վրա, հետևաբար դասագրքերի նյութերը պետք է ընդգրվեն լեզվառճական և թեմատիկ բազմազանության սկզբունքով, որոնք պետք է պարունակեն աշխարհաճանաչողական գիտելիքներ, ձևավորեն սովորողների արժեհամակարգը և աշխարհայացքը, ինչպես նաև զարգացնեն աշակերտների լեզվամտածողությունը, ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու հմտություններն ու կարողությունները: Միջին դպրոցում հայոց լեզվի հիմնական բաժինների ուսուցմանը զուգահեռ յուրաքանչյուր դասաժամի պետք է ժամանակ հատկացնել կապակցված խոսքի, ոճագիտության և գործնական գրությունների ուսուցմանը:

Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում ուսուցչի նպատակը պետք է լինի քերականական գիտելիքներից բացի, աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, իրենց ասելիքը հնարավորինս պարզ, հստակ ու գեղեցիկ ներկայացնելու կարողություն: Ուսուցիչը պետք է աշակերտի գիտակցությանը հասցնի, որ լեզվական օրինաչափությունները ուսումնասիրելիս իրենք ձեռք են բերում աշխարհաճանաչողական գիտելիքներ, կրթում կամք և բնավորություն, ինքնակրթությամբ զբաղվելու կարողություն: Հետևաբար լեզվական որևէ կարգ ուսուցանելիս ուսուցիչը պետք է անցկացնի նախապատրաստական զրույց՝ բացատրելով տվյալ քերականական ձևի դերն ու նշանակությունը, կիրառական արժեքը: Օրինակ՝ հնչյունաբանության ուսուցման ընթացքում գործնական ճանապարհով սովորեցնում ենք հնչյունափոխության և ուղղախոսության կանոնները, որոնք անհրաժեշտ են ճիշտ ու գրագետ խոսելու և գրելու համար: Բառագիտության ուսուցման ժամանակ անդրադառնում ենք հոմանիշներին, հականիշներին, համանուններին, հարանուններին, դարձվածքների ոճական առանձնահատկություններին, պատկերավորման միջոցներին՝ ցույց տալով նրանց դերը գեղեցիկ ու հյութեղ խոսք կառուցելու գործում: Բառակազմության միջոցով հիմնականում հարստացնում ենք աշակերտների գործուն բառապաշարը՝ կիրառելով տարբեր բառարաններ (ուղղագրական, բացատրական, բառակազմական, հոմանիշների, ստուգաբանական), որոնցով աշխատելու հմտություններ աշակերտներն արդեն ձեռք են բերել տարրական դասարանում: Քանի որ բառերը ևս դաստիարակության գործիք են և իրենց դերն ունեն աշակերտների, բարոյական, գեղագիտական, հուզական դաստիարակության գործում, հետևաբար ուսուցիչը նախապես պետք է ընտրի այն բառերն ու արտահայտությունները, որոնք համապատասխան հույզ, զգացմունքներ կմշակեն աշակերտների հոգեկան աշխարհում: Այստեղ կարևոր է իմանալ, որ ոչ բոլոր բառերն են խոսելիս ծնվում մեր մտքում հիշողությամբ կամ վերարտադրվում՝ արդեն նախապես ծանոթ լինելով մեզ. կան բառեր ու բառակապակցություն-

ներ, որոնք խոսելիս մեր մտքի մեջ ստեղծվում են «լեզվական զուգորդությունների խմբերի անալոգիայով: …. Այս արտադրության գործունեությունը… ընթանում է 2 ուղղությամբ.

1. Մենք դրսից ընդունում և սովորում ենք շատ բան, սակայն հաճախ այնքան թույլ, որ չենք կարող հիշողությամբ միայն վերարտադրել, եթե օգնության չգան այն հարաբերության խմբերը, որոնց հարել են զուգորդությամբ մեր դրսի լսածները» [1, 35-36]: Օրինակ՝ Մ. Աբեղյանի մեկնաբանությամբ՝ մեկ անգամ լսելով *դաշտավայր* բառը և այլևս առիթ չունենալով ասելու կամ լսելու այն, մարդը մոռանում է: Սակայն անհրաժեշտության դեպքում նա հեշտությամբ հիշում է և գործածում, որովհետև այն զուգորդվելով մտել է գոյականների նման հարաբերություն ցույց տվող ձևական խմբերի մեջ (քաղաք, դաշտ և այլն):

2. Դիցուք՝ մի մարդ իր կյանքում երբեք չի լսել տվյալ բառաձևը (դաշտավայրում), սակայն նա հաճախ լսել է և գործածել է նման այլ բառաձևեր (քաղաքում, դաշտում) և այլն: «Խոսելու ժամանակ, երբ հարկավոր է, հեշտությամբ ստեղծում է «դաշտավայրում» … բառաձևը՝ հենվելով նույն հարաբերությունները ցույց տվող բառաձևերի և կապակցության ձևի վրա: Այս դեպքում նա ոչ թե վերարտադրում է հիշելով…այլ…անալոգիական կազմություն է անում, այսինքն՝ իր իմացած ձևերի նմանությամբ նա ինքն է ստեղծում նույնանման ձևեր» [1, 37]:

«Այս անալոգիական կազմության օգնությամբ է, որ երեխան 3-7 տարեկան հասակում արդեն կարողանում է իր իմացած գոյականները կանոնավոր կերպով հոլովել, և՛ բայերը խոնարհել, և՛ կանոնավոր պարզ խոսքեր կազմել՝ առանց դրսից լսած լինելու իր բանեցրած բառաձևերի ու կապակցության ձևերի մեծ մասը» [1, 37-38]:

Կարծում ենք՝ իսկապես կարևոր գործոն է անալոգիական այս կազմության եղանակը, հետևաբար *բառագիտություն* թեման ուսումնասիրելիս աշակերտների մեջ այս հմտությունների և կարողությունների ձևավորումը պետք է լինի ուսուցչի հիմնական նպատակներից մեկը. անալոգիական կազմության շնորհիվ աշակերտների խոսքը կլինի քերականորեն ճիշտ՝ առանց արտաքին աշխարհից շատ բան լսած և սովորած լինելու: Իրականում մեր խոսքերի զգալի մասը մենք ոչ թե յուրացնում ենք նախապես և վերարտադրում, այլ կազմում ենք հենց խոսելու պահին՝ հենվելով նախկին փորձի վրա:

Միջին դպրոցում խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն նաև պատկերավորման միջոցների ուսուցումը և դրանց կիրառումը խոսքում: Աշակերտները պետք է կարողանան առանձնացնել դրանք և ինքուրույն կիրառել խոսքում (տարրական դասարանում այս հմտությունների ձևավորման նախահիմքերն արդեն դրվել են նկարագրական խոսքի ձևավորման ժամանակ): Գեղարվեստական երկի ուսուցման ընթացքում, աշակերտների

ուշադրությունը հրավիրելով նկարագրական հատվածների վրա (դիմանկար, բնանկար և այլն), առաջարկում ենք դրանք վերարտադրել գեղարվեստորեն՝ գրավոր կամ բանավոր: Կարդացած ստեղծագործության վերաբերյալ սեփական կարծիք հայտնելու, վերլուծելու, ասածը հիմնավորելու համար փաստեր բերելու կարողությունների ձևավորման համար պետք է պահանջել, որ աշակերտները կիրառեն գեղարվեստական արտահայտչամիջոցներ և լեզվական հնարներ: Կարելի է առաջարկել աշակերտներին պահել օրագիր, որտեղ կգրանցվեն բնագրերից ստացած տպավորությունները և դուր եկած հատվածները, գեղեցիկ ձևավորել այն: Կարելի է նաև ստեղծագործություններից դուրս գրել նկարագրական հատվածները և կիրառել դրանք իրենց խոսքում մեկ այլ երևույթի վերաբերյալ (հայրենիքի, քաղաքի, ծննդավայրի և այլն):

Աշակերտների դատողական մտածողության զարգացման, գնահատողական խոսք կառուցելու կարողության ձևավորման համար հետաքրքիր առաջադրանք կարող է լինել ուսումնական նյութի հիմնական գաղափարի արտահայտումը առած-ասացվածքների միջոցով, քանի որ դրանք ամրապնդում են ասելիքը, ունեն գաղափարական, կրթական և դաստիարակչական մեծ նշանակություն: Աշակերտներին հանձնարարում ենք բնագրի հիմնական իմաստն արտահայտել ասացվածքի միջոցով և տալ մեկնաբանություն («Ես ասեմ, դու մեկնաբանիր»): Աշխուժություն մտցնելու համար կարելի է երբեմն մեկնաբանել նաև հումորային տարբերակով: Օրինակ՝ մեկնաբանելով «Տաշած քարը գետնին չի մնա» ասացվածքը՝ բուն իմաստի մեկնաբանությունից բացի՝ կարելի է մեկնաբանել այսպես՝ «…եթե պահակը քնած է» կամ «…եթե անտաշ քարի տակ չի մնացել» և այլն: Այս եղանակը կօգնի երեխայի մեջ զարգացնելու մտածելու, խոսքային իրադրության մեջ արագ կողմնորոշվելու ընդունակություն, կզարգացնի երևակայությունը: Մտածողություն – խոսք – ինքնարտահայտում շղթայական կապի ուղղությամբ պետք է տարվի հետևողական աշխատանք, որպեսզի աշակերտների մեջ ձևավորվեն խոսքային իրադրության մեջ ճիշտ կողմնորոշվելու, համապատասխան խոսք կառուցելու կարողություններ:

Միջին դպրոցում աշակերտներին պետք է վարժեցնել տեքստեր կազմել թե՛ պաշտոնական, թե՛ գեղարվեստական ոճերով, ընդ որում՝ դրանք պետք է կազմվեն և՛ իրական, և՛ երևակայական դեպքերի մասին, որպեսզի զարգանա երեխաների ստեղծագործական երևակայությունը: Այդ նպատակով կարելի է հանձնարարել տեքստի կազմում հետևյալ եղանակով. նախապես աշակերտներին բաժանում ենք բառեր կամ բառակապակցություններ և հանձնարարում, որ աշակերտները դրանց մասին խոսեն 5 րոպե՝ խոսքը կառուցելով պաշտոնական ոճով (բառերը պետք է ընտրվեն այնպես, որ զարկ տան աշակերտների երևակայությանը), այնուհետև նույն բառով կամ մեկ այլ բառով (աշակերտը կարող է վերցնել արկղիկից) կազմել գեղարվեստական խոսք և ներկայացնել:

Այդ բառերը պետք է կապել դասի բարոյախրատական կողմի հետ: Կարելի է հանձնարարել նաև էքսպրոմտ խոսք. արկղից հանել որևէ բառ կամ թեմայի վերնագիր և անմիջապես սկսել խոսել դրա մասին: Սա ևս մտքի վարժանք է և կնպաստի խոսքային ցանկացած իրադրության մեջ արագ կողմնորոշվելու և խոսքը ճիշտ կառուցելու կարողության զարգացմանը:

Ուսուցման որակը բարձրացնելու համար արդեն 8-րդ, 9-րդ դասարաններում կարելի է առաջարկել աշակերտներին, որ յուրաքանչյուր շաբաթվա վերջում ամփոփեն իրենց սովորածն ու յուրացրածը և ներկայացնեն դասարանում: Այս առաջադրանքը կատարելու համար առաջարկվում է խոսքը կազմել տարբեր ոճերով՝ գնահատելով յուրացրածի արդյունավետությունը, քննարկել, թե որքանով է կիրառելի և որտեղ կարելի է կիրառել իրենց սովորածը: Բնականաբար, արտահայտվելիս աշակերտների խոսքը պետք է կառուցվի ճիշտ ու գեղեցիկ, տրամաբանված և հիմնավորված փաստերով: Միջին դպրոցի բարձր դասարաններում կարելի է թեմայի շրջանակներում անցկացնել դաս-բանավեճ, որի արդյունքում աշակերտները ձեռք կբերեն գրագետ բանավիճելու մշակույթ, բարեկիրթ պահվածք, պատշաճ և վայելուչ վարքագիծ, կսովորեն, որ բանավիճում են տվյալ թեմայի շուրջ և ոչ թե բանավիճողի հետ:

Միջին դպրոցականն արդեն տարրական դասարաններում սովորել է, թե ինչպես պետք է տեղեկություն հավաքի իրեն անհրաժեշտ նյութի վերաբերյալ, դրա հիման վրա կառուցի իր խոսքը, որը պետք է ունենա իր հստակ կանոնները՝ տեղեկության հավաստիություն, անաչառ վերաբերմունք, նյութի ամբողջական ու հակիրճ ձևակերպում, պարզ ու հստակ շարադրանք: Արդեն ծանոթ լինելով խոսքի ոճերին՝ աշակերտը պետք է կարողանա իր բանավոր և գրավոր խոսքը կառուցել տարբեր ոճերով: Այս կարողությունների ձևավորումը աշակերտների մոտ կարելի է զարգացնել և՛ անհատական, և՛ խմբային տարբերակով:

Այսօրվա երեխան բավականին առաջադեմ է, առավել տեղեկացված, հետևաբար արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար ուսուցիչը պետք է աշակերտներին նախ հնարավորություն տա արտահայտվելու, որպեսզի ուսումնասիրի նրանց ներուժը, իմացության մակարդակը, այնուհետև, ճիշտ մեթոդ ընտրելով, կազմակերպի ուսուցման գործընթացը՝ աշակերտների մտավոր ունակություններին համապատասխան: Առավել կարևոր է ուսուցման կազմակերպման արդյունավետ մեթոդի խելամիտ ընտրությունը, քանի որ մենք առնչվում ենք մտավոր տարբեր ընդունակությունների տեր երեխաների հետ և բոլորին միևնույն պահանջներին համապատասխան կրթել հնարավոր չէ. դասարանում միայն հաշված երեխաներ կյուրացնեն մատուցված նյութը:

Ուսուցչի նպատակը պետք է լինի աշակերտների մեջ ձևավորել անկաշկանդ արտահայտվելու, զրուցելու, վստահորեն սեփական տեսակետն ու

կարծիքն արտահայտելու կարողություններ, խթանել նրանց ստեղծագործելու ցանկությունը: Աշակերտների անձնական փորձն ու ուսումնասիրությունները ուսուցչի կողմից պետք է ուղղորդվեն այնպես, որ նրանց մեջ ձևավորվեն բարձր բարոյականությամբ և մտավոր կարողություններ ունեցող անհատականություններ: Լավ ուսուցիչը, լավ մասնագետ լինելուց բացի, պետք է կարողա ճանաչել իր սաներին, դառնա նրանց ընկերն ու բարեկամը, ուղղորդի, հավատ ներշնչի ապագայի նկատմամբ: «Երեխային գիտություն են ուսուցանում, նպատակ ունենալով դարձնել նրան ոչ այնքան գիտուն, որքան լուսավորյալ մարդ…, որ նա իրեն զգա ավելի ամուր, հարստանա ու գեղեցկանա ներքուստ» [3, 176], հետևաբար ուսուցիչը պետք է «ունենա ավելի շուտ պայծառ, քան գիտություններով լցված գլուխ, քանզի թեև հարկ է փնտրել և մեկը, և մյուսն ունեցող մարդու, այնուամենայնիվ լավ բարքերն ու խելքը մերկ դիտությունից գերադասելի են» [3, 176]: Կրթելով աշակերտներին՝ ուսուցիչը նրանց գիտակցությանը պետք է հասցնի այն, որ ուսումնառության տարիների ընթացքում ձեռք բերված գիտելիքները, սովորելու կարողությունը նրանց համար ամուր հիմք են՝ շարունակելու մարդկության զարգացման գործն այնտեղից, որտեղ վերջանում է կուտակված փորձը, որ յուրացնելով ունեցածը և ստանալով հիմնավոր գիտելիքներ՝ ավելի գիտակից ու հիմնավոր կարող են կառուցել նորը, որ ունենալով հարուստ ներաշխարհ, կունենան ավելի պայծառ մտածելակերպ, իսկ նման մարդն ավելի հեշտ է հաղորդակցվում շրջապատի հետ: Լիարժեք տիրապետելով մարդկության փորձին, վերլուծելով յուրացրածն ու անցկացնելով այն սեփական գիտակցությամբ՝ աշակերտը կհասկանա, որ կյանքի ճշմարտության որոնման մեջ նրանք արդեն մի քայլ առաջ են անցել և իրենց ընտրած ճանապարհով կարող են առաջ գնալ՝ դրսևորելով իրենց որպես հասարակության անդամ:

Աշակերտները պետք է գիտակցեն խոսքի դերը իբրև ճանաչողության միջոց, իբրև տարբեր բնագավառներից ու առարկաներից գիտելիքներ ձեռք բերելու, մտածողության ակտիվացման, աշխարհայացքի ձևավորման և վարքի չափանիշների մշակման կարևոր գործոն: «…Ես չդադարեցի գնահատել այն վարժությունները, որոնցով զբաղվում են դպրոցներում: Ես գիտեի, որ այնտեղ ուսումնասիրվող լեզուները անհրաժեշտ են հին գրքերը հասկանալու համար. որ առակների ազնվությունը արթնացնում է ոգին, որ…պատմության խոհեմ ուսումնասիրությունը նպաստում է ճիշտ դատողության կազմավորմանը. որ լավ գրքերի ընթերցանությունը… զրույց է անցյալ դարերի ամենապատվավոր մարդկանց… հետ, և ընդ որում՝ ուսյալ զրույց…» [2, 43]: Դպրոցում բոլոր առարկաների ուսումնասիրման արդյունքում զարգացնելով և կրթելով աշակերտների ոգին, ձևավորելով բարձր արժեհամակարգ, ընդլայնելով նրանց մտահորիզոնը՝ հնարավոր է զարգացնել աշակերտների խոսքը, քանի որ, Սենեկայի

ճիշտ բնորոշմամբ, «երբ հարցի էությունը լցնում է հոգիդ, բառերն ուղեկցում են նրան» [3, 202]:

Խոսքը մեր էության մի մասնիկն է, սրտի, հոգու խորքից է բխում մարդու վերաբերմունքը այս կամ այն առարկայի, երևույթի, իրադարձության նկատմամբ: Խոսքի զարգացումը խթանվում է զգացմունքային շփման, կենդանի խոսքի միջոցով, քանի որ նրա միջոցով արտահայտում ենք սեր, ատելություն, զայրույթ, զոհունակություն և այլն:

Խոսքի զարգացման աշխատանքները կազմակերպելու համար կան բազմաթիվ ծրագրեր ու մեթոդական ձեռնարկներ, որոնց մեջ հիմնական շեշտը դրվում է բառապաշարի հարստացման, քերականական կանոնների ուսուցման վրա, սակայն այդ ամենը բավարար չէ. առավել կարևոր է, որ մարդն օժտված լինի բարու, գեղեցիկի, մարդասիրական գաղափարներով, ունենա հարուստ ու համակողմանի զարգացած ներաշխարհ: Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ իր հետ պետք է տանի ուսումնառության արդյունքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները, որոնք պետք է դառնան նրա սեփականությունը, վերափոխվեն, վերաձուլվեն և ձևավորեն նրա ներաշխարհը: Դպրոցում լիարժեք կրթություն և դաստիարակություն տալու դեպքում հնարավոր է ձևավորել աշակերտի անհատականությունը, կերտել այնպիսի կերպար, որը կլինի մտածող, ստեղծագործող, կունենա բարոյակամային բարձր որակներ, որոշակի սկզբունքներ, ձևավորված աշխարհայացք և արժեհամակարգ՝ դառնալով անհատականություն՝ հասարակությանը տալով այն, ինչ ձեռք է բերել ուսուցման, կրթության և դաստիարակության արդյունքում:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, 700 էջ:
2. Դեկարտ Ռ., Քննախոսություն մեթոդի մասին, Ե., 1968, 150 էջ:
3. Մոնտեն Մ., Փորձեր, 1991,Ե., 446 էջ:
4. ՎՊՀ-ի գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, 2018, էջ 298- 306:

ПРИНЦИП ВЗАИМОПОСЛЕДОВАТЕЛЬНОСТИ РАЗВИТИЯ РЕЧИ В МЛАДШИХ И СРЕДНИХ КЛАССАХ

Резюме

Хачатрян Асмик

Ключевые слова: *лексический состав, языковое мышление, развитие логики и мышления, межпредметная связь, мировоззрение, система ценностей*

Основной задачей обучения родному языку в общеобразовательных школах является воспитание и образование такого поколения, которое сможет полноценно установить коммуникацию с обществом. В процессе формирования коммуникативных способностей и развития речи особая роль и значение отводится родному языку, который одновременно является и предметом исследования, и средством для изучения других предметов. Так как коммуникативные способности учащихся развиваем как правило на основе включенных в учебники оригинальных текстов, а также текстовых работ и практических упражнений, следовательно, материалы учебников должны отбираться с учетом принципа лингвостилистического и тематического разнообразия, которые должны содержать когнитивное познание мира, сформировать систему ценностей и мировоззрение учащихся, развить языковое мышление школьников, умения и способности самостоятельной и креативной работы.

В процессе обучения у школьников должны сформироваться умения правильной ориентировки в определенной языковой ситуации и составления соответствующей правильной речи. Учащиеся должны знать принципы оформления речи: достоверность информации, объективное отношение к ситуации, целостность речи, краткость речевых формулировок, ясность и четкость синтаксических конструкций.

В работе над развитием речи важен обоснованный выбор метода обучения, т.к. в школе преподаватель сталкивается с детьми, имеющими разные умственные способности. Исходя из этого можно сделать вывод о том, что обучать всех в соответствии с одними и теми же требованиями невозможно.

THE PRINCIPLE OF ALTERNATION OF SPEECH DEVELOPMENT IN PRIMARY AND MIDDLE GRADES

Khachatryan Hasmik

Summary

Key words: *vocabulary, linguistic thinking, development of logic and thinking, interdisciplinary links, outlook, value system*

In public school, the principal issue of teaching the mother tongue is to bring up and to educate such a generation that will be able to communicate fully with others. The mother tongue has a special role and importance in speech development and in the formation of communicative abilities, which, at the same time, is a subject of research and a means of teaching other subjects. As we develop the learners' communicative abilities with the help of the original texts, the textual works and the practical exercises included in the textbooks, therefore the materials of the textbooks must be chosen on the basis of the principle of linguo-stylistic and thematic diversity, that must contain informative knowledge about the world, form the value system of the learners, develop the pupils' linguistic thinking and their skills and abilities to work and create independently.

During the learning process, there must be built capacities for the pupils' correct orientation in speech situation and for their pertinent speech. The learners must be aware of the rules of speech, which are as follows: accuracy of information, impartial attitude, completeness of speech and concise formulation of it, clear and precise wording.

The reasonable choice of the teaching method is essential for organizing the work intended for speech development, as at school, we deal with children having different intellectual capacities, and it is impossible to educate all of them according to the same requirements.